ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.08.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-37/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-37/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով Գնումների աջակցման կենտրոնի կողմից 29.07.2013թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-37/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ն 25.06.2013թ. N 192-13 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ տեղեկացնելով, որ «Լուսանշան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ճանապարհային ներկի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԼՈՒՍ-ՄԵԱՊՁԲ-13/1» ծածկագրով մրցակցային երկխոսության ընթացակարգ:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից հաստատված և սահմանված կարգով «www.gnumner.am» համացանցային կայքում հրապարակված 2013 թվականի գնումների պլանում նախատեսվել է, որ 112-ից 115-րդ տողերով նշված ապրանքատեսակները ենթակա

են գնման բանակցային ընթացակարգով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով (ԲԸՀ):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գնումների պլանները հաստատվում են ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի: Դրանք հրապարակվում են տեղեկագրում բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝ բաց ընթացակարգը, մրցակցային երկխոսությունը, սահմանափակ ընթացակարգը և բանակցային ընթացակարգը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 21-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման (փոփոխման) օրն է:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացների կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը 11.07.2013թ. N 218բ) գրությամբ հայտնել է իր դիրքորոշումը «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ի 25.06.2013թ. N 192-13 գրության վերաբերյալ, որտեղ նշվել է, որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ը նախաորակավորման չափանիշներ է սահմանել ոչ միայն փաստաթղթային հիմնավորումների տեսքով, այլև պատրաստի արտադրանքի փորձաքանակի ներկայացման և պրակտիկ գծանշման տեսքով:

Գնումների աջակցման կենտրոնը գտնում է, որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից նախաորակավորման հայտարարությամբ վերը նշված պահանջի սահմանումը չի համապատասխանում Կարգի 90-րդ կետի պահանջներին:

Գնումների աջակցման կենտրոնի ներկայացրած բողոքի համաձայն «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից խախտվել են Կարգի 21-րդ, 22-րդ և 90-րդ կետերով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Գնումների աջակցման կենտրոնը խնդրել է «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԼՈՒՍ-ՄԵԱՊՁԲ-13/1» ծածկագրով մրցակցային երկխոսության ընթացակարգը հայտարարել ապօրինի:

2. «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 31.07.2013թ. N 05/032-1059 գրությամբ դիմել է «Լուսանշան» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ Գնումների բողոքարկման խորհրդին 29.07.2013թ. Գնումների աջակցման կենտրոնի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը 12.08.2013թ. N 234 գրությամբ Գնումների աջակցման կենտրոնի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Ճանապարհային գծանշման նյութերը լայն սպառման ապրանք չեն, ոչ էլ ընդհանուր օգտագործման ներկանյութ, որ հնարավոր լինի բավարարել միայն փաստաթղթային տեխնիկական բնութագրերով կամ մասնակցի որակավորման չափանիշներով:

Ճանապարհային ներկով գծանշվում է ճանապարհների բանուկ մասը, որի վրա ազդում են ինտենսիվ երթևեկությունը, մթնոլորտում գտնվող ագրեսիվ նյութերը, արևի ուլտրամանուշակագույն ճառագայթները և այլն: Աշխարհում արտադրվող միևնույն տեխնիկական բնութագրեր ունեցող բազմաթիվ ճանապարհային ներկերից միայն մի քանիսն են դիմանում Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմաններին և այդ պայմաններում առաջնորդվել միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի երկրորդ կետի պահանջներով (նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով), նշանակում է երթևեկության կարգավորման բնագավառը տանել կործանման: Ընտրությունը անհրաժեշտ է կատարել բացառապես ներկանյութերի տեխնիկական ցուցանիշների և ՀՀ տարածքում կիրառելիությունը ստուգումից հետո, կիրառելի ներկանյութեր ներկայացնողների միջև մրցույթ անցկացնելով և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ ճանապարհային ներկը պետք է ունենա՝

1. Ասֆալտի և մթնոլորտային ագրեսիվ բնութերի ազդեցության տակ չսևանալու հատկություն
2. Պայծառության և գույնի պահպանում գծանշման պահից
3. Փչվի ՀՀ–ում օգտագործվող մեխանիզմներով
4. Ստեղծի տեսանելի ներկային շերտ
5. Դիմանա մթնոլորտի կտրուկ փոփոխություններին և տեղումներին

6. Մաշադիմացկունություն, Երևան քաղաքի ինտենսիվ երթևեկության և ճանապարհների ոչ բարվոք մաքրության պայմաններում դիմանա (50% մաշվածություն) մինչև 6 ամիս.

7. Չպարունակի ագրեսիվ և թունավոր նյութեր.

Նշվածից երևում է, որ միայն փաստաթղթային ձևով հնարավոր չէ հստակ ներկայացնել գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, որի պատճառով գնումն իրականացվել է մրցակցային երկխոսությամբ:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ 2012թ. բաց ընթացակարգով ճանապարհային ներկի ձեռքբերման արդյունքում ունեցել են ներկայնութեր (այդ թվում «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ի ներկը), որոնք սևացել են հենց գծանշման պահից կամ մի քանի օր հետո չեն տարբերվել մեկ տարի առաջ կատարված գծանշումից և լիազոր մարմնի՝ ՀՀ ԿԱ ոստիկանության պահանջով կատարվել են 300 000 գծամետր լրացուցիչ՝ կրկնակի և եռակի գծանշումներ:

Բացի այդ բաց ընթացակարգի կիրառման դեպքում հնարավոր չի լինում փոփոխություն կատարել տեխնիկական բնութագրերում և արագ արձագանքել պատվիրատուների պահանջներին կամ կառավարության որոշումներին (օրինակ ՀՀ կառավարության 07.06.2012թ. №737-Ն որոշումը, որի արդյունքում փոխվեց գունային սպեկտորը):

Ըստ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի նախաորակավորման ընթացակարգով ՊՈԱԿ-ը կարողացել է ստեղծել իր «Շրջանակային համաձայնագրերը» և մրցակցային երկխոսությամբ կարճ ժամկետում իրականացրել է պատվիրատուների պահանջները, նույնիսկ այդ դեպքում նախաորակավորված չորս մասնակիցներից միայն «Վանպոլիմէդ» ՍՊԸ-ն է կարողացել մրցունակ ճանապարհային ներկ մատակարարել:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը հայտնել է նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարը ի կատարումն ՀՀ վարչապետի 17.07.2013թ. թիվ 02/16.5/10383-13 հանձնարարականի առաջարկել է կասեցնել «ԼՈՒՍ-ՄԵԱՊՁԲ 13/1» գնման գործընթացը, սակայն լիազոր մարմինը՝ ՀՀ ԿԱ ոստիկանությունը պատճառաբանել է, որ գնման գործընթացի կասեցմամբ ստիպված են լինելու կասեցնել Երևան քաղաքի փողոցների գծանշման աշխատանքները, իսկ առջևում նոր ուսումնական տարվա սկիզբն է, իրենց հերթին են սպասում դպրոցամերձ փողոցների բազմաթիվ հետիոտնային անցումներ, վերանորոգվող մեկ տասնյակից ավելի փողոցներ, անկախության օրվա տոնակատարության միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքները...

Այդպիսի տհաճ միջադեպերից խուսափելու և պատվիրատուների պահանջներին արագ արձագանքելու նպատակով «Լուսանշան» ՊՈԱԿ-ն առաջարկել է շրջանակային համաձայնագրերով նմանատիպ խմբերում ներառվող գնման առարկաների ցանկում (ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. 220-Ն, 14.06.2013թ. 485-Ն հրամաններ) ներառել նաև ճանապարհային կահավորման ապրանքներ՝

1. Ճանապարհային ներկեր (տարբեր գույների)
2. Սինթետիկ ներկեր (տարբեր գույների)
3. Արծնաներկ
4. Լուծիչ
5. Մետաղական խողովակներ (ցինկապատ կամ նախաներկված)
6. Պլաստմասյա (կամ ասբեստե) խողովակներ
7. Դիտահորեր (կամ կափարիչներ)
8. Մալուխներ
9. Հաղորդալարեր
10. Լուսացույցային հսկիչներ (և համալրող սարքեր)
11. Տրանսպորտային լուսացույցներ
12. Հետիոտնային լուսացույցներ
13. Ճանապարհային նշաններ (և առանձին մասեր)
14. Լուսանդրադարձիչ ինքնակպչուն թաղանթ
15. Ցինկապատ թիթեղ (հարթ գլանվածք)
16. Օժանդակ այլ նյութեր

Բացառության կարգով թույլատրել ճանապարհային կահավորման ապրանքների գնման մրցույթն անցկացնել օգտագործողի կողմից պրակտիկ փորձակումից հետո:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ անհասկանալի է «ԳԱԿ» ՊՈԱԿ-ի վերաբերմունքը, ՀՀ կառավարության 18.04.2013 թ. N 372-Ն ՀՀ կառավարության 10.02.2013 թ. N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, որոշման XI գլխի 137 հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերի պահանջներով ԳԱԿ-ը պետք է բողոքին արձագանքեր 2-3 օրվա ընթացքում:

Ըստ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի ԳԱԿ-ը բողոքը ստացել է 25.06.2013թ., «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից տրված պարզաբանումը՝ 11.07.2013թ., ծանուցագիր է ուղարկել 05.08.2013թ., երբ «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ն արդեն հասցրել է բողոքներ ուղարկել ՀՀ վարչապետին և ՀՀ նախագահին (03.07.2013 թ.):

«Լուսանշան» ՊՈԱԿ-ի մոտ հարց է ծագել ԳԱԿ-ի բողոքարկման խորհուրդը պետք է քննարկի «ԼՈՒՍԱՆՇԱՆ» ՊՈԱԿ-ի գնման գործընթացի, թե վերադասի որոշումների իրավազորությունը:

«Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ի վերջին բողոքի հիմնական շեշտը դրված է հասցեատերերի կողմից անտարբերության և նամակներին չպատասխանելու վրա:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը գտնում է, որ ԳԱԿ-ի բողոքարկման խորհուրդը ըմբռնումով կմոտենա անվտանգության գծանշումների կարևորությանը և ջուր չի լցնի իրենց հիմնական գործը թողած ինքնագերագնահատող, պետական մարմինների աշխատանքը և ժամանակը չգնահատող բանսարկուների ջրաղացին:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը ի լրումն Կենտրոնին ներկայացված 06.08.2013թ. N 234 գրության հայտնել է, որ «ԼՈՒՍ-ՄԵԱՊՁԲ- 13/1-/1-4» նախնական պայմանագրերի շրջանակներում ձեռք բերված ճանապարհային ներկանյութերը ամբողջությամբ ստացվել և օգտագործվել են, բացառությամբ «Նաիրի Թորոսյան» ԱՁ-ի մատակարարած ճանապարհային սինթետիկ ներկի, որից 1675 կգ պահվում է վթարային վերականգնողական աշխատանքների համար:

3. ԳԲԽ-37/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է Գնումների բողոքարկման խորհրդին 29.07.2013թ. ներկայացված բողոքը բավարարել՝ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից ճանապարհային ներկի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼՈՒՍ-ՄԵԱՊՁԲ-13/1» ծածկագրով մրցակցային երկխոսության ընթացակարգը հայտարարել ապօրինի:

4. ԳԲԽ-37/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-37/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է 29.07.2013թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը, «ԼՈՒՍ-ՄԵԱՊՁԲ-13/1» ծածկագրով մրցակցային երկխոսության ընթացակարգի նախաորակավորման հայատարարությունը (այսուհետև՝ նաև Հայտարարություն), «Լուսանշան» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) կարիքների համար 2013թ. գնվելիք ապրանքների գնումների պլանը, «Լուսանշան» ՊՈԱԿ-ի

12.08.2013թ Կենտրոնին ներկայացված N 234 գրությունը, ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը 08.08.2013թ. ներկայացված N 24/1395 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից ճանապարհային ներկի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԼՈՒՍ-ՄԵԱՊՁԲ-13/1» ծածկագրով մրցակցային երկխոսության ընթացակարգ:

ՀՀ ոստիկանությունը 08.08.2013թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն հասցեագրված N 24/1395 գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միայն փաստաթղթային ձևով հնարավոր չէ ճշգրիտ (օբյեկտիվորեն) ներկայացնել գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, բացի այդ ներկանյութերը անհրաժեշտ է ենթարկել պրակտիկ փորձարկման, «Լուսանշան» ՊՈԱԿ-ը ապրանքերի ձեռքբերումը կազմակերպել է մրցակցային երկխոսության ընթացակարգով՝ սահմանելով նախաորակավորման չափանիշներ (փաստաթղթային հիմնավորումներից բացի նաև պատրաստի արտադրանքի փորձաքանակի ներկայացման և պրակտիկ գծանշման տեսքով):

ՀՀ ոստիկանությունը հայտնել է նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկվել է կասեցնել գնման գործընթացը և միջոցներ ձեռնարկել արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար: Գնման գործընթացի կասեցման դեպքում սակայն, ստիպված կասեցվելու են նաև Երևան քաղաքի փողոցների գծանշման այն աշխատանքները, որոնք նախատեսված են անկախության օրվա տոնակատարության միջոցառումների պլանով:

1. Գնումների աջակցման կենտրոնը Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից հաստատված և սահմանված կարգով «www.gnumner.am» համացանցային կայքում հրապարակված 2013 թվականի գնումների պլանում նախատեսվել է, որ 112-ից 115-րդ տողերով նշված ապրանքատեսակները ենթակա են գնման բանակցային ընթացակարգով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով (ԲԸՀ), սակայն կազմակերպվել է մրցակցային երկխոսության ընթացակարգ, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ և 22-րդ կետերը:

ՀՀ ԿԱ ոստիկանության «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2013 թվականին գնվելիք ապրանքների գնումների պլանի 112-ից 115-րդ տողերում նշվել է հետևյալը.

- 112 - գնման առարկայի անվանումը՝ ճանապարհային ներկ (դեղին), գնման ձևը՝ ԲԸՀ

• 113 - գնման առարկայի անվանումը՝ ճանապարհային ներկ (ձեռքով գծանշման), գնման ձևը՝ ԲԸՀ

• 114 - գնման առարկայի անվանումը՝ սինթետիկ ներկ (ճանապարհային), գնման ձևը՝ ԲԸՀ

• 115 - գնման առարկայի անվանումը՝ ճանապարհային ներկ (մեքենայացված գծանշման), գնման ձևը՝ ԲԸՀ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գնումների պլանները հաստատվում են ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի: Դրանք հրապարակվում են տեղեկագրում բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝ բաց ընթացակարգը, մրցակցային երկխոսությունը, սահմանափակ ընթացակարգը և բանակցային ընթացակարգը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև նաև՝ Կարգ) 21-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման (փոփոխման) օրն է:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացների կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ը ճանապարհային ներկը մրցակցային երկխոսության ընթացակարգով ձեռքբերելով խախտել է Կարգի 21-րդ և 22-րդ կետերով սահմանված պահանջները, քանի որ հրապարակված գնումների պլանով նախատեսվել է այն ձեռքբերել բանակցային ընթացակարգով՝ գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի 12.08.2013թ. N 234 գրությամբ ներկայացված շրջանակային համաձայնագրերով նմանատիպ խմբերում ներառվող գնման առարկաների ցանկում «Ճանապարհային կահավորման ապրանքների» ներառման առաջարկությանը, ապա այն դուրս է բողոքի առարկայի քննության շրջանակներից, բացի այդ ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1170-Ն հրամանով հաստատված «Շրջանակային

համաձայնագրերով իրականացվող գնումների» ցանկի 1.7 կետի (Շինանյութեր) 1.7.10 ենթակետում ներառված է «ներկեր» ապրանքատեսակը:

2. Գնումների աջակցման կենտրոնը հայտնել է, որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ը նախարակավորման չափանիշներ է սահմանել ոչ միայն փաստաթղթային հիմնավորումների տեսքով, այլև պատրաստի արտադրանքի փորձաքանակի ներկայացման և պրակտիկ գծանշման տեսքով, ինչը չի համապատասխանում Կարգի 90-րդ կետի պահանջներին:

Օրենքի 21-րդ հոդվածի՝

5-րդ մասի համաձայն՝ նախարակավորման հայտարարությամբ սահմանված կարգով գնահատվում է մասնակցի հայտը՝ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը, կազմվում է նախարակավորված մասնակիցների ցուցակ:

6-րդ մասի համաձայն՝ գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախարակավորված մասնակիցները:

Կարգի 90-րդ կետի՝

1-ին ենթակետի համաձայն՝ նախարակավորման հայտարարությամբ սահմանվում են մասնակցի մասնակցության իրավունքին և որակավորմանը ներկայացվող հետևյալ պահանջները՝

ա. մասնակիցը պետք է բավարարի օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին,

բ. մասնակիցը պետք է բավարարի օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է նախարակավորման հայտարարությամբ սահմանված կարգով: Նախարակավորման հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

ա. նախարակավորման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում,

բ. մասնակցի կողմից հաստատված գրավոր հայտարարություն՝ նախարակավորման հայտարարությամբ սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին՝ հայտարարությանը կցելով նույն կարգի համաձայն պահանջվող տեղեկությունները:

Կարգի 79-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. եթե մասնակիցը հայտով ներկայացրել է օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2. բացի հայտարարությունից, օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Կարգի 80-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրերի առարկայի, ծավալի՝ գումարային արտահայտությամբ, պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալների վերաբերյալ տեղեկությունները,

2. մասնակիցը համարվում է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից պատրաստի արտադրանքի փորձաքանակի ներկայացման և պրակտիկ գծանշման չափանիշներ սահմանելը և կիրառելը հակասում է Կարգի 79-րդ, 80-րդ և 90-րդ կետերով սահմանված պահանջներին:

Այսպիսով Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 21-րդ, 22-րդ, 79-րդ, 80-րդ և 90-րդ կետերով սահմանված պահանջները:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը Կենտրոնին ներկայացված 06.08.2013թ. N 234 գրությամբ հայտնել է, որ «ԼՈՒՍ-ՄԵԱՊՁԲ-13/1-/1-4» նախնական պայմանագրերի շրջանակներում ձեռք բերված ճանապարհային ներկանյութերն ամբողջությամբ ստացվել և օգտագործվել են:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կենտրոնի կողմից 29.07.2013թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը բավարարել:

2. «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից ճանապարհային ներկի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼՈՒՍ-ՄԵԱՊՁԲ-13/1» ծածկագրով մրցակցային երկխոսության ընթացակարգը հայտարարել ապօրինի

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արման Մնացականյան

Անդամ՝ Էդվարդ Գրիգորյան